ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

**ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

07.12.20112

Թիվ18

ՈՐՈՇՈՒՄ

2011Թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԻՑ ՀՈԴՎԱԾ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման Մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Վարչական բյուջեի 01-01-01-51 գործառնական դասակարգնման 4235 հոդվածից 115.0հ դրամ հատկացնել 01-01-01-51 գործառնական դասակարգնման 4823 հոդվածին հարկային տեսչության հաշվարկված տույժի գումարները վճարելու համար:

2. 01-01-01-51 գործառնական դասակարգման 4221 հոդվածից 50.0հ.դրամ հատկացնել 01-01-01-51 գործառնական դասակարգման 4215 հոդվածին՝ ծառայողական ավտոմեքենայի ապահովագրական ծախսերի համար:

Քվեարկություն

| | | |
|---|---|---|
| Ասատրյան Հռիփսիմե | կողմ | |
| Ավագյան Մարտիկ | կողմ | |
| Ղազարյան Պետիկ | կողմ | |
| Նահապետյան Կարապետ | կողմ | |
| Աբրահամյան Նարեկ | կողմ | |
| Մարկոսյան Անդրանիկ | կողմ | |

Մանուկյան Վարազդատ կողմ

Ղևոնդյան Երջանիկ կողմ

Ազատավանի գյուղապետ Ս.Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

**ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

07.12.20112

Թիվ19

ՈՐՈՇՈՒՄ

2012Թ_Ի ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական տուրքերի և Հայաստանի Հանրապետության օրենքով և Տեղական Ինքնակառավարման Մասին օրենքի 16-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ Է

Ազատավան համայնքի համար 2012թ-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի_շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար՝

Հիմնական օբյեկտների համար

ա) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգե գործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ,

բ) սույն կետի ա)ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000 /տասնհինգ հազար/ դրամ ,

բբ) 501-1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000 /քսանհինգ հազար/ դրամ,

բգ)1001քմ և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 / երեսուն հինգ հազար/ դրամ,

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր / դրամ,

դ) 20քմ և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի շինությունների, քաղաքաշինական

այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի համար/ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա- շինարարական նախագծով

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500/ մեկ հազար հինգ հարյուր/ դրամ:

բ)Բացի օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներից նախատեսում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով ,ապա բացի սույն կետի „ա„ ենթակետով սահմանված դրույքաչափերի կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով:

գ) նախատեսում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով ,ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինություն ,որի նկատմամբ կիրառվում են նոր շինության համարսույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3) Համայնքի վարչական տարածքում, շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

1,2,3 կետերի համար կիրառվել է 0.5 գործակիցը:

4) Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500/մեկ հազար հինգ հարյուր / դրամ:

2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր / դրամ:

5) Համայնքի տարածքում

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է յուրաքնչյուր օրվա համար 350 /երեք հարյուր հիսուն/ դրամ,

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի, մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվու թյան համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

6) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խա-ղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է.

ա) առևտրի օբյեկտների համար՝ 50000 / հիսուն հազար/ դրամ,

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ:

7) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 500 / հինգ հարյուր/ դրամ:

8) Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1քմ –ի տեղադրման տուրքը սահմանվում է

ա/ այլ արտաքին գովազդի համար՝ 500/ հինգ հարյուր/ դրամ,

բ/համայնքի տարածքում տեղադրված դատարկ գովազդային վահանակի համար՝ 700/յոթ հարյուր/ դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայությունն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000դրամ:

2. Տեղական վճարների դրույքչափերը

Տեղական վճարների դրույքչափերը սահմանվում են՝

ա/ համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված՝ տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու, հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավար-ման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց՝ հատուցման վճար՝ 5000/ հինգ հազար/ դրամ,

բ/ համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ եղած հողերը հատկացնելու, ետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 / մեկ հազար/ դրամ,

գ/ տեղական ինքնակառավարաման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման վճար՝ 1000 / մեկ հազար / դրամ:

Քվեարկություն

| | | |
|---|---|---|
| Ասատրյան Հռիփսիմե | կողմ | |
| Ավագյան Մարտիկ | կողմ | |
| Ղազարյան Պետիկ | կողմ | |
| Նահապետյան Կարապետ | կողմ | |
| Աբրահամյան Նարեկ | կողմ | |
| Մարկոսյան Անդրանիկ | կողմ | |
| Մանուկյան Վարազդատ | կողմ | |
| Ղևոնդյան Երջանիկ | կողմ | |

Ազատավանի գյուղ[illegible] Ս.Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

**ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

07.12.20112

Թիվ20

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական Ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ և 32-րդ հոդվածի 5-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հետևյալ ձևով

| | | | |
|---|---|---|---|
| 1. Համայնքի ղեկավար | | - | 160,0հ. դրամ |
| 2. Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | - | 90,0հ.դրամ |
| 3. Համայնքի ղեկավարի աշխ. քարտուղար | 1 | - | 95,0հ.դրամ |
| 4. Աշխատակազմի գլխ. մասնագետ | 1 | - | 89,0հ.դրամ |
| 5. Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | - | 88,0հ.դրամ |
| 6. 1-ին կարգի մասնագետ | 1 | - | 40,0հ.դրամ |
| 7. Գեղմասվար | 1 | - | 40,0հ.դրամ |
| 8. Գրադարանավար | 1 | - | 40,0հ.դրամ |
| 9. Օպերատոր | 1 | - | 60,0հ.դրամ |
| 10. Վարորդ | 1 | - | 60,0հ.դրամ |
| 11. Պահակ | 1 | - | 35,0հ.դրամ |
| 12. Կատարածու | 1 | - | 35,0հ.դրամ |
| 13. Հավաքարար | 1 | - | 40,0հ.դրամ |

Քվեարկություն

1.Ասատրյան Հռիփսիմե կողմ

2. Ավագյան Մարտիկ կողմ

3. Ղազարյան Պետիկ կողմ

4. Նահապետյան Կարապետ կողմ

5. Աբրահամյան Նարեկ կողմ

6. Մարկոսյան Անդրանիկ կողմ

7.Մանուկյան Վարազդատ կողմ

8. Ղևոնդյան Երջանիկ կողմ

Ազատավանի գյուղապետ Ս.Խաչատրյան